

մեք յեկեղեցւոջն հրապարակագոյժ արարեալ զնորովեալն զայն. զորս ի խոր երեկոյին առեալ զնոյն տաճիկան, մինչ հողէվարի կայր՝ խնդրէր զներումն, զոր դառնացաւ կրկին եւ ոչ հայեցաւ յերեսն, եւ այսպէս վշտակրութեամբ եւ խղճութեամբ աւանդեաց զհողին, զորս յայսմ վրէժխնդրութիւն մնաց քեզ առնել, որ յանձն արար զինքն քեզ՝ սբ. Հօրդ մեծի: Իսկ ի վեցերորդում թաղմանն սրբոյ հօրն, եւ հրաման թաղաւորին ի վերայ Մարտիրոս Վրդ. պտին լինել առաջնորդ սբ. յերուսաղէմայ, զի թէ միակողմանէ թաղծեալ տրտմեցաք բազում սգով, բայց յայսմ կողմանէ խնդամք, զի դարձեալ Վրդ. պտին խնդացաք: Իսկ մեք որք աստ այսմ սգոյ պատահեցաք եւ լուաք զպատուիրանս կտակի հանգուցեալ սրբոյ Հօրէ մեծի, առ ոտս քո անկեալ աղերսեմք, զի փութանակի հրաման թղթոյ քո հասուցանիցես յԱթոռն սբ., զի մի եղծ(ց)ի կտակ Հողեւոր Տիրին. զի Սահակ Վրդ. պտէ հրամանքդ գիտակ ես եւ գիտես, նմա յանձն արասցես Աթոռն սբ. եւ Հայրութիւն քո մի վերջացուցես ի նմանէ, այլեւ սաստ գրեսցես ամենայն յարեւելեան առաջնորդաց եւ վարդապետաց, նաեւ թուղթ մի՝ Ջուղայեցւոց, զի առանց հակառակութեան զՍահակ Վրդ. պտն յառաջ կոչեսցեն. որովհետեւ յանձն արար քեզ, քանզի Միքայէլ Վրդ. պտն եւս մեռաւ, հրամանքդ ողջ լինիս, այլ այնպէս մարդ չկայ, բայց թէ ոմանք նորարոյսք հակառակող են, սաստեսցես մեծահրա-